ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆԸ

04 մարտի 2018 թվականի N 38-Ա

ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԸՆԴԵՐՔԻ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 40-րդ, 41-րդ հոդվածներով, 42-րդ հոդվածի 1-ին մասի պահանջով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության 2018 թվականի մարտի 20-ի թիվ ԲՓ 20 «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության» պետական փորձաքննական դրական եզրակացությունը, «ԲՈՆԱՆՈ» ՍՊ ընկերության 2018 թվականի փետրվարի 08-ի թիվ 02 դիմումը, «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի 2018 թվականի փետրվարի 12-ի թիվ Ֆ-38/18 գրությունը, Ընդերքի գործակալության պետի զեկուցագիրը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. «ԲՈՆԱՆՈ» ՍՊ ընկերությանը (այսուհետ՝ ընկերություն)՝ ինն ամիս ժամկետով տրամադրել օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության թիվ ԵՀԹ-29/265 թույլտվությունը Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավանի հանքային դաշտի Կյուրեղ լեռան քվարցիտների երևակման տարածքի (այսուհետ՝ տարածք) հետևյալ կոորդինատներով՝ 1.X=4541043 Y=8440998, 2. X=4541157 Y=8440907, 3.X=4541265 Y=8440944, 4. X=4541343 Y=8441298, 5.X=4541043 Y=8441448 (տրված են WGS-84 (ՎԻ ՋԻ ԷՍ-84) (ARMREF 02) ազգային գեոդեզիական կոորդինատային համակարգով) սահմանափակված 11.6 հա տեղամասում՝ երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ կատարելու համար:

2. Կնքել տարածքի օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության ընդերքօգտագործման պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր):

3. Ընդերքի գործակալության պետին՝

1) ծանուցել ընկերությանը՝ 5 օրվա ընթացքում վճարել ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման պետական տուրքը,

2) հրավիրել ընկերությանը՝ 10-օրյա ժամկետում պայմանագիրն իր կողմից վավերացնելու (ստորագրելու և կնքելու) համար,

3) ընկերության կողմից պայմանագիրը վավերացնելուց (ստորագրելուց և կնքելուց) հետո 10-օրյա ժամկետում վերջինիս տրամադրել օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության իրավունքը հավաստող փաստաթղթերի փաթեթը (օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության թույլտվություն, պայմանագիր, լիազոր մարմնի հետ համաձայնեցված աշխատանքային ծրագիր),

4) ծանուցել ընկերությանը, որ սահմանված ժամկետներում պայմանագիրը չվավերացնելու և ընդերքօգտագործման իրավունքի փաթեթը չստանալու դեպքում, օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության իրավունք հայցելու դիմումը բավարարելու վերաբերյալ սույն հրամանը կճանաչվի ուժը կորցրած,

5) սահմանված կարգով իրականացնել երկրաբանական ուսումնասիրության իրավունքի հաշվառումը՝ երկրաբանական ուսումնասիրությունների իրավունքի հաշվառման գրանցամատյանում:

4. «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի տնօրենին՝ Ընդերքի գործակալության կողմից փաստաթղթերի փաթեթը ստանալուց հետո, եռօրյա ժամկետում կատարել ֆոնդային փաստաթղթերում սույն հրամանից բխող համապատասխան գրառումները:

5. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից 2 ամսվա ընթացքում:

6. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ղեկավարին:

ԱՇՈՏ ՄԱՆՈՒԿՅԱՆ